ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО
ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И
СПОРТА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.010599600, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Правительский дом 2, 0010, V. Sargsyan 3, Governmental House 2, Yerevan, www.edu.am,
secretariat@edu.am

No _____ «07» 07 2022թ.

ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԲՆՕՐՐԱՆ» ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարությունը (ի դեմս նախարարի տեղակալ Արայիկ Խզմալյանի) մի կողմից և բարերար **«Բնօրրան» ՊՀՊՀ ընկերություն» հասարակական կազմակերպությունը** (ի դեմս տնօրեն Հռիփսիմե Հարությունյանի) մյուս կողմից **(այսուհետ միասին՝ կողմեր)**,

կարևորելով պատմամշակութային ժառանգության արժեքն ու հետագա սերունդներին փոխանցելու անհրաժեշտությունը,

շահագրգռված լինելով օժանդակելու պատմության և մշակույթի հուշարձանների վերականգնմանը, օգտագործմանն ու հանրահռչակմանը,

անհրաժեշտ համարեցին միավորել իրենց հնարավորությունները և համատեղ աշխատանքներ իրականացնել Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության աշխատանքների շուրջ:

Այդ ուղղությամբ կողմերը պայմանավորվեցին հետևյալի մասին.

1. **Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը՝**
   1) ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Ծաղկունք բնակավայրի Սբ. Հարություն եկեղեցու ամրակայման և վերականգնման աշխատանքների կատարման ընթացքում անվճար հիմունքներով կտրամադրի արխիվային փաստաթղթերի պատճենները,
   2) աշխատանքների կատարման ընթացքում կցուցաբերի մասնագիտական և գիտագործնական աջակցություն,

2. **«Բնօրրան» ՊՀՊՀ ընկերություն» հասարակական կազմակերպությունը՝**
   1) համագործակցելով ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ՝ իր միջոցների հաշվին կկազմի «Գագարին նախագծի» տարածքում ընդգրկված Գեղամավան, Դդմաշեն, Զովաբեր, Ծաղկունք, Վարսեր և Գագարին բնակավայրերի նորահայտ հուշարձանների վկայագրերը,
   2) համագործակցելով ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ՝ իր միջոցների հաշվին կկազմի «Գագարին նախագծի» տարածքի համար մշակվող տարածական պլանավորման փաստաթղթերի շրջանակում պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և նորահայտ հուշարձանի կարգավիճակ ունեցող հուշարձանների պահպանական գոտիների նախագծերը,
   3) իր միջոցների հաշվին օրենքով սահմանված կարգով կիրականացնի ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Ծաղկունք բնակավայրի Սբ. Հարություն եկեղեցու ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքները:
3. Հուշագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ: Հուշագիրը կարող է լուծվել կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ մյուս կողմի՝ հուշագրի պայմանները խախտելու դեպքում:

4. Կողմերը պարտավորվում են զանգվածային լրատվության միջոցներով լուսաբանել և ապահովել իրականացվող աշխատանքների հրապարակայնությունը:
5. Սույն հուշագիրը բաղկացած է 3 (երեք) էջից և կնքվում է հայերեն 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին հատկացվում է սույն հուշագրի 1 (մեկ) օրինակ:
6. Սույն հուշագրում լրացումներ և փոփոխություններ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:
7. Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն՝

նախարարի տեղակալ՝

ԱՐԱՅԻԿ ԽԶՄԱԼՅԱՆ

ստորագրություն

Բարերար՝

«Բնօրրան» ՊՀՊՀ ընկերություն»

ՀԿ տնօրեն՝

ՀՌԻՓՍԻՄԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ստորագրություն